

ՏՆՕՐԵՆ-ԽՐԱՆՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Z. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տարեկան	500 դր.
Վեցամսեայ	250 »
Յամսեայ	150 »
Սրտատանձու տրի.	70 ճ.

Քաղաքագրութիւն Կոնստանտնուպոլիս
ամիս ամսոյ 1 և 15ին

100 ՓՄՐԱ



Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef
H. MAMOURIAN
Arévélian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

Օրասերք ազգային և ևս խաղաղական

100 ՓՄՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Սրտի Համաժողովը բաւական գործնական եղած է և բացի Հայկական խնդրէն, գրեթէ միւս բոլոր հարցերը իր քննութիւնէն ու վճարականութիւնէն անցած են:

Գերման պատուիրակները հակառակ իրենց դժած ուղղութեան և դարձեալ Համաժողովի որոշումը կանխելու համար իրենց թափած ճիգերուն, չեն յաջողած և վերջ ի վերջոյ յանուն համաժողովին՝ Լոյս ձորճի գրեթէ սպառնական խօսքերուն առջեւ, ստիպուած են տեղի տալ և խոնարհիլ համաժողովին որոշումներուն, գործարիլ խոստանալով վէրսայի գաղտնագրին սպառնանքէն զխաւրարայնները, զէնդիկեցութեան, յանձնելի անուսի քանակութեան և սուզանքի խնդիրները:

Գերմանիա կամ անոր այժմու անկոյսուն կառավարութիւնը, յայտնի կ'ե. բեւի թէ միշտ բիրտ ուժին առջև պիտի ածուցուի տեղի տալ և պահանջուած ամեն պայման գործադրել: Համաձայնական պետութիւնները մշտապէս ընդդիմութիւններու բաղխելու պարտաւորուած պիտի ըլլան և ստիպուած ամեն առթիւ սպառնալիքներով ստանալ գաղտնագրին արտադրութիւններով իրենց ստանալ չյաջողածը: Արդ մշտապէս բանակ մը շարժման մէջ պիտի գտնուի պարտադրել տալու համար ամեն բան, թեթև կամ ծանր:

Սակայն կարելի է մշտնջենաւորել այս դրութիւնը, կարելի է վստահել քաղաքական անցուղաւորութեան սպառնալիք մէջ ստանալիք երեւոյթներուն, և անոնց վրայ յենուլ, ահա առեղծուած մը, որու մասին անշուշտ կ'մտաւորուի ամենէ աւելի շահ ունեցող և սահմանակից ըլլալով՝ յարտու վստահի սպառնալիքին տակ գտնուող Ֆրանսան:

Ամերիկա՝ արդէն մեկուսացածի մը պիտի ըլլաւ և յուսովիայ նախագահական ընտրութեանց արդիւնքէն յետոյ թերևս պիտի որոշէ իր ճշգրիտ դիրքը:

Անգլիա՝ աշխարհի ամենէ մեծ գաղթական երկիրը, նորանոր յանձնառութեանց տակ մանկով իրաւ է որ իր գաղտնագրին գործովը ըլլալու պատրաստակամութիւնը պիտի ունենայ, մանաւանդ որ գաղտնագրով մըն ալ կապուած է, սակայն չէ կարելի այժմէն սպառնալիք անգլի թէ միջև մ'ը պիտի ուզէ տանիլ իր աշակցութիւնը, երբ Անկլո-Ֆրանսայան գաղտնագրին ալ իր գործութիւնէն բաւական բան կորսնցուցած է Ամերիկայի կողմէ չվստահուողով:

Միւս կողմէ Գերմանիոյ կառավարական անհաստատ գիւրք և դեռ նորանոր փոփոխութիւններ անցնելու հաւանականութիւնը, կուզան անգամ մըն ալ հաստատել թէ վէրսայի գաղտնագրը, ինչպէս ուրիշ անգամներ ևս անդադարած ենք, սահմանաւէ կարելի փոփոխութիւններու ենթարկուելու և բարեփոխուելու: Մնաց որ տարիներու հոլովմամբ՝ ներկայ թափը ևս պիտի մեղմանայ, երկու անտեսական յարաբերութիւններու բերմամբ այդ երկու ժողովուրդները պիտի մտնեն և սպառնալիք փոխվելով մը խրատուակը ընդ միշտ հեռացնելու համար թերևս նոյն իսկ Ֆրանսա՝ որ այսօր անյողողը ըլլալ կ'ընայ, չպիտի փոփոխի իր ծայրայեղ պահանջարկներուն մէջ մնալ և աշխարհի խաղաղութեան ու իր երկիրն բարգաւաճման համար զոհողութիւններ ընելու պատրաստակամութիւն ցոյց տայ:

Գրիտ գայ վերջապէս որ մը որ Համաժողովը իր աշխատութիւնները լրացած համարելով պիտի դադարեցնէ իր իրաւերը, այն ատեն գաղտնագրին անգործագրութեան առթիւ, գահլիճներու միջև տեղի ունենալ պիտի սկսին բանակցութիւնները, և զիտենք թէ զիւսանալիքական բանակցութիւնները որքան գանդաղ և առաձգական են, եզրակացութիւններու և որոշումներու յանգելու անկարողութեամբ մը գործուած:

Իրաւ է որ Ազգերու Ընկերութիւնը պիտի ստանձնէ հաւանականորար, համաշխարհային պատերազմէն յետոյ եկած նոր դրութեան գործադրութեան փրկին հսկողութիւնը, սակայն գիտենք թէ՛ առանց ոյժի որքան արժէք կրնայ ներկայացնել:

Մ. Նահանգայ մէջ սկսած են այժմէն յառաջիկայ նախագահական ընտրութեան պայքարները:

Ապաժամ պիտի ըլլար այժմէն գուշակութիւններ ընել հոն գոյութիւն ունեցող երկու մեծ կուսակցական գանդուածներու, հանրապետականներու կամ աստիակաւարականներու յաջողութեան մասին: Բայց նկատի առնելով որ աստիակաւարականներու ճրագրին մաս կ'կազմէ ոչ լից ընկերներու և գարեջուրի գործածութեան ազատութիւնը, կրնանք այժմէն գուշակութիւն մը ընել թէ հաւանական է աստիակաւարականներու յաջողութեանը, իրենց ընտրելին նախագահութեան աթոռ բարձրացնելու համար և այս պարագային Մ. Նահանգները որոշ չափով մը պիտի մասնակցին: Սերտական հարցերով և անշուշտ պիտի ընդունին Ազգերու Դաշնակցութեան մասնակցիլ և վէրսայի գաղտնագրը ստորագրել:

Աւրոպական այն ազգերը որոնք ուզակի շահ մը ունին աստիակաւարականներու կամ հանրապետականներու յաջողութեան մէջ, անտարբեր չպիտի մընան ընտրական պայքարին մէջ և իրենց բարոյական և թերեւս նիթական ազդեցութիւնը ի գործ դնեն, աշխարհի քաղաքականութեան որոշ գոյն մը տալու համար:

Սրտի համաժողովին մէջ թրջական խնդիրը եւս անտարկայ դարձած է նկատողութեան և որոշուած է ընդունիլ որ և է փոփոխութիւն գաղտնագրի մասին: Հելլէն բանակի յաջողութիւնը այլեւս համաձայնականները գրած է

որոշ ու մեկին իրողութեան մը առջեւ և վէնիզետի քաղաքականութիւնը ոյժ գտած՝ Անգլիա, յուսով պիտի մղուի ստանց տառամաս մը:

Առայժմ հելլէն բանակը սպառնալիքներով մը վրայ պիտի մնայ, սպառնալիքով թուրքերու տրուած պայմանաժամին որ Յուլիս 27 կ'ինթագրուի, եթէ թուրքիս միջեւ այդ որը չստորագրէ, հելլէն բանակը գործակցութեամբ անգլիական ծովային ու ցամաքային ոյժերու պիտի շարունակէ իր յառաջխաղացումը:

Սրտի Համաժողովը միմիայն զանց առած է հայկական խնդիրը, թերեւս կ'սպասէ որ նախագահ Ուելսըն որոշէ սպառնալիք Հայաստանի սահմանները, ալ աւելի հաւանական կ'երեւի մեզի համար, որ Համաժողովը կ'սպասէ որ Հայեր իրենց ոյժերով նոր կացութեան մը առջեւ դնեն զինքը, որպէսզի առանց գծուարութեան ու երկար քննութիւններու պէտք ունենալու, հաստատէ և ընդունի իրազէս և իրաւապէս ստեղծուած նոր կացութիւնը:

Z. Մ.

ՀԱՅՅԵԼՔՆԵՐ ՄԱՐԶ

Վերջապէս մինչեւ ե՞րբ պիտի մընան կիլիկիայէ գաղթող գաղթականները եկեղեցոյ չըջափակին մէջ, ըլլալով տեղափոխուած տաճարին դռներուն առջեւ, մինչեւ ե՞րբ պիտի քաղկոտին այդ խեղճերը ի, ենց գոյութիւնը և մինչեւ ե՞րբ հայ և օտար անցորդներու աչքին առջեւ պիտի պարզին ամեն տեսակ տեսարաններ:

Այդ տեսարանները արդէն սովորական դարձած են ամենքիս, սակայն տիրող աղտոտութիւնը որ բնական հետեւեցնէ է հոն խոնորած բազմութեան, անկէ բուրոց գորշահոտութիւնը, սկսած է անասնիլի գտնուիլ և ամառուան եղանակին համար վրտանդաւոր հանգամանք մը ստանալ: Անշուշտ Ազգաստիւնում յանձնախումբը, որու իրաւասութեան կը պատկանի, եթէ չիմ սխալիլ, այդ գաղթականներու հոգատարութիւնը, պիտի խորհի միջոցներ, առջեւ անշուշտ համար հոն տիրել սկսած աղտոտութեան և հեռացնել պիտի ջանայ գտնուի տեղափոխել այլուր կամ եթէ պիտի մեկնին փութացնել անոնց մեկնումը:

Իզմիրի հայութեան արժանապատւութեան համար եւս այնքան պատւարի չիմ կարծիք որ ըլլայ այդ գաղթականներուն կեղեցեց գաւիթին մէջ կուտակումը, ակոնտեստ ընելով ամենքը իրենց նիւստ ու կացին:

Սակայն գովելի պարագայ մը զըրաւեց ուշադրութիւնս, որու վրայէն լուր թեմար չէ կարելի անցնիլ: Այդ գաղթականներու աշխատասիրութիւնը եղած է: Այր թէ կին ամենքն ալ ըզրադում մը ստեղծած են, պարագայ նստողներու թիւը ցածրաւ է, աշխատելու փոխաբ մը տեսանելի է ամենքի վրայ և այս պարագան բաւական միջիթարական կ'գտնուի, որ ցոյց կուտայ հայ ժողովուրդին կենսունակութիւնը և ջանասէր տրամադրութիւնները, ի՞նչ կացութեան և ի՞նչ վիճակի մէջ ալ գտնուած ըլլայ:

ԵՍ

ԱՌԵՂՈՒԹՅՈՒՆ ԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ Է

Մեր գծրազգ հայրենիքի պատմական պայմաններու բերումով մինք մեր սեփական հոգի վրայ չենք ունեցիր բուրժուազիա Հայաստանի տիրող կամ չըջապատող տարրերը իրենց կեղեցեցներով, բաւարարութիւններով կարգեր են գործուենայ հայ առեւը:

բականին հայրենիքէն դուրս փնտռել իւր և իւր գործի ապահովութիւնը: Այդ է պատճառը, որ պատմական անցեալէն սկսած մինչև այժմ հայ հայրենիքը զրկուած է եղեր իւր խոշոր արդիւնաբերող տարրէն, այդ է պատճառը որ օտար երկիրներու մէջ մենք ունեցել ենք և ունինք բազմաթիւ հայ կապիտալիստներ, այդ է պատճառը որ հայ բուրժուազիան օտարացած է հայութիւնէն և սպառնալիքայնացած է: Այդ է զխաւոր պատճառներէն մէկը, որ մեր նորածին հանրապետութիւնն այս երկու տարուան ընթացքին տեսեալանաւորապէս նորերական և ֆինանսական ծանր կիլիկիայ մէջ կը տառապէ, որովհետեւ ներկայ Հայաստանը իւր սահմաններէն ներս չունի բուրժուազիա կամ մարդիկ, որոնք կը պահանջեն, որ այս երկու տարուան ընթացքին հայկական կեանքին խորթացած հայ կապիտալիստները արտասահմանէն գային, մտնէին Հայաստան, ինչպէս եղաւ Մալիկիանները: Մենք անխառն համարած ենք այդպիսի պահանջ, երբ համոզուած ենք եղեր թէ նրկականացած, սպառնալիքայնացած հայ բուրժուազիան դեռ մշուշով չըջապատուած Հայաստանի մէջ չի տեսնել իւր գրամազլիս ապահովութիւնը: Մենք այն համոզման ենք եղած, թէ օտարացած, դիմազուրկ հայ բուրժուազիան չունի ձեռներէնցութիւն, կազմակերպութիւն՝ ներկայ անորոշ պայմաններու մէջ Հայաստան մտնելու, և օգտագործելու իւր գրամազլիսը: Բազմաթիւ ներքին և արտաքին պայմաններու հետ մենք մտանաւաճած ենք նաև մեր կառավարութեան ձեռք առած միջոց՝ երբ անբարոյութիւնը հայ կապիտալիստներու մուտքը Հայաստան գիւրացնելու համար, ընդհակառակն մենք քսած ենք, ցորչափ կառավար մեջ արտողը Հ. Յ. Դաշնակցութեան գիւրացուրի կազմակերպութիւնն է, հայ երկշտ բուրժուազիան վստահելով գաղտնակցական գուտլիկէն չի վստահեր անոր պաշտպանութեան տակ Հայաստան մտնել և շահագործել իւր կապիտալը: Ոչ թէ ներկայ, այլ սպառնալիք Հայաստանի համար ալ, եթէ միւս աննպատակ պայմաններ վերցուին, միայն Դաշնակցութեան մեծատիրութիւնը բուրժուազիան պիտի լինի ծառայելու իւր առիթ: Հայ բուրժուազիային Հայաստանէն հեռու մնալու:

Ինչպէս այժմ, նոյնպէս և անցեալի մէջ այդ է եղեր մեր համոզումը: Երբ, երբեք Մալիկիանները կազմեցին իրենց էքսպրիպիտան Հայաստանի ուսումնասիրութեան համար և Հայաստանի

յառաջ... արդիւնքերուն... ձեռնարկներ սկսելու պատահով...

Հայ կապիտալիստ Մալխեաններու ցոյց տուած հունցը... հայրենասիրութիւնը...

Մեր կասկածները այսօր դժբաղ դարձր իրականացած են Այսօրուան արհող կուսակցութեան հովանաւորութեանը...

Առեղծուածը լուծուած է: «Հայաստանի Զոյն»

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ՀԱՆԴԷՍԻ ՄԸ ԱՌՔԻԻ

Առջի իրիկուն նախկին Տիւրքոնէզներու շէնքին մէջ տեղի ունեցաւ բնական փոքրիկ հանդէս մը...

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

Պ ա շ տ օ մ ա կ ա մ Զ ն կ ո յ յ

Մեծ Ընդհանուր Բանադրեցիկն

ՌՕՏՈՍԹՈՒ ԳՐԱԽՈՒՄԸ.— Մեր ոյժերը սկսան Հերաբլիայի և Սուլթան քէօյի մօտ ցամաք ելնելով յառաջանալ Ռոտտսթոյի ուղղութեամբ...

Ռոտտսթո ուժեղապէս ամրացած էր, ան պաշտպանուած էր 18 թնգանոթներով որուն ճը 150նոց էին:

Սրբ անգլ. զրահաւորները կը ուժեղացնէին քաղաքը «Իէրաքս» թորփիլահալածը թուրք թնգանոթածիպներուն մինչև 800 մէթրի չտի մօտեցած է տառանց վնասուելու:

«Ալիբոֆ» զրահաւորը որու մէջ կը գտնուէր թագաւորը, այս կողմերէն անցած ստեն, դէպի պատերազմին վայրը ուղղուեցաւ և գործն մասնակցութիւն մ'ունեցաւ:

Ն. Վ. թագաւորը չուզելով շոգեմաւին ներքնամասին մէջ ապաստանել, կրիւի ամբողջ տեւողութեանը կամրջակին վրայ մնացած է:

Թրքական 55րդ զօրքամանի հրամանատարը Ալէէտտին պէյ յանկարծակի եկած ընտանիքը ձգելով փախուստի դիմած է:

Ուրիշ զօրքամանի կը շարունակեն ցամաք ելնել Ռոտտսթո Այս գործողութեան գործադրութիւնը անգլ. ընդհանուր հրամանատար Ամիթի շիրմ շնորհաւորութեանց արժանացաւ:

Հիւլէն զբոշակը ծածանեցաւ կառավարչատան վրայ: Յանուն բանակի ընդհ. հրամանատարի

Թ. ԲԱՆԿԱԼՈՍ

ԹՐԱԿԻՌՅ ՃԱԿԱՏ.— Ծամաք հանուած մեր զինուորներէն զօրաւոր գունդ մը որ Սամբազի մօտ թիրոջուտի ուղղութեամբ յառաջ կը քալէր, 2 թշնամի գումարտակներու հանդիպած է որոնք տկար ընդդիմութենէ մը վերջ ետ մղուեցան իրենց համար ծանր կորուստներով: Գերի բռնեցինք 2 սպայ և 13 զինուորային: մեր զօրքամանը գրաւեցին թիրոջուտն Այս քաղաքին ինչպէս նաև Ռոտտսթոյի մէջ կատարեալ կարգապահութիւն կը տիրէ:

Թշնամին մեծ պատրաստութիւններէ վերջ ուժգնօրէն ուժեղացնող Գարաւորաձի մեր յառաջապահները, ան փորձեց յարձակիլ, սակայն զիւրաւորութեամբ ետ մղուեցաւ:

Սպարապետ բանակի՝ Լ. ԲԱՐԱՍԻՒՂՈՐՈՒԼՕ

ՍՈՒՐԻՈՅ ՎԻՃԱԿԸ

Լօնտոնէ կը տեղեկացնեն թէ էմիր Յայալ ընդհ. զօրաւոր հրատարակած է, զիմադրելու համար զօր. կուրտի դէպի Դամասկոս յառաջխաղացումին: Յայալ Յրանասցիներուն ղեմ կողակցու համար զօր. Ալէմպիի օգնութիւնը խնդրած է:

ՌՈՒՍ ՍՈՎԻԵՏՆԵՐԸ ԵՒ ՀԱՅՏԵՐԸ

Սովիետներու և Հայաստանի կառավարութեան միջև հաշտութեան բանակցութիւնները խզուելու վրայ են:

Ռոսիկեան հակառակ իր խոստումին որով Հայաստանը ընդունի անկախ պիտի ճանչնար, Մոսկուայի կառավարութիւնը կուզէ քօնթօսի ենթարկել Հայաստանի զիւրաւարական յարաբերութիւնները զորս ան ունի օտարներու և մանաւանդ Ալէմտան պետութեանց հետ:

Միւս կողմէ Հայկ. Հանրապետութեան պատուիրակները յայտարարած են որ իրենք չեն ընդունիր պոլշեիկ բոքալականութիւններու Երեւան զրկուելը:

ԹՈՒՐԿԻԱ ՊԵՏԻ ՍՏՈՐԱԳՐԷ

Կ. Պոլսէ հասած կարեւոր հեռագիրներ կը տեղեկացնեն թէ Սուլթանին նախագահութեան տակ տեղի ունեցող ժողովը որչա՞ծ է լիազօրութիւն տալ Բարիկ գտնուող թուրք պատուիրակութեան որպէսզի առանց վերսպ օհուցութեան և որոշեալ պայմանաժամը չի լրացած ստորագրէ Սուլթանի հաշտութեան գաշնագիրը:

Մեծ եղաքոսը Բարիկ եւթարով տնձուր պիտի ստորագրէ գաշնագիրը:

Միւս կողմէն ստեն կը կարծուի որ Տուտու Յէրիտ քաղաք պիտի համաձայն արպէսի կարեւոր իր զանչիծին մէջ գտնուող կարգ մը շոգ սեփեւը դո քա նե տեղ, յետոյ անգլիական զանչիծ մը կողմէն Այս մասին կործիթի կատարեալ համաձայնութիւն գոյացած է նաև Սուլթանին հետ որ որչա՞ծ է համաձայնաներու նպաստաւոր քաղաքականութեամբ մը հետեւիլ:

ՅՈՒՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊՈԼՍՈՅ ՄԷՁ

Այն 130 Բէմալ կանները որոնք Պոլսոյ մէջ Անգլ. պատերազմական նաւու մը մէջ բանտարկուած էին, յաջողած են փախչիլ և Վոսթրի Ասիական եզերքը անցնիլ: Արդեք զանազան խումբ տու երու մէջ պատառ սրուած են: Փախուսականները հետագոյն զուգիւրով ձերբակալուած են Հելլէն զօրքերու կողմէն և զրկուած են Անգլ. պատերազմական աստանիւն:

Յոյն զօրքամաներու ձեռք առած կարակ միջոցներու շնորհիւ, Վոսթրի եզերքները ամբողջութեամբ մաքրուած են հրոսխուժերէ:

ՔՐԱՍԻՆ ԼՕՆՏՈՆ ԿՐ ՎԵՐԱԴԱՌՆԱՅ

«Տէյլի Թէլէկրաֆ» տեղեկութեանց համաձայն Ռիվալ հասած է Անգլի թորփիլահալած մը, որ Լօնտոն պիտի բերէ Քրասինը, և Ռուս պատուիրակութեան միւս անդամները:

Սովիետականները Քրասինակի մէջ գրաստան մը քով աւագ ձգած են 15 միլիոն սկիզբում Ռուսիլ, որ յառաջիկային Ռուսիայ զրկուելիք անգլիական ապրանքներու համար երաշխաւորութիւն մը պիտի ըլլայ:

ԲԻՐԷԱԻ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

«Ֆինանսիա Թայմզ» Յունաստանի հարտարարուեստական և վաճառականական դիրքը վերլուծելի վերջ կրէ: «Ռոսիկեան, Թրիէսթէն վերջ Բիրէան է որ, մեծ մասամբ իբր'ամբարանոց կը ծառայէ թուրքիոյ, Ռուսիոյ, Ռուս մանիոյ և Հարասայի Արիւիթի համար, ամեն ժամանակէ աւելի կարեւոր է որ Անգլ. կառավարութեանը վաճառականական յարաբերութիւնները ընդարձակէ Յունաստանի հետ:»

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ

Երէկ Ատանայի Հայ պատուիրակութեան պետ Պ. Մ. Տամատեանէ Հարաւայի ճամբով հեռագիր մը հասած է առաջնորդարան, որով ստիպողական օգնութիւն կը խնդրէ վտարգիւն աւելու և կը խնդրէ որ իր կողմը հաղորդուի Պոլսո, Բարիկ, Լօնտոն, և յարմար դատուած կողորոնները:

ՅԵՐԶԱԿՈՒՄ ԱՏԱՆԱԻ ՎՐԱՅ

Թուականէս չուրջ տաս տասն երկու օր առաջ թուրք չէթէներ յարձակում գործած են Ատանայի վրայ, սակայն ամենամեծ կորուստներով ստիպուած են ետ քաշուիլ, թողնելով նոյն իսկ իրենց մեռելները կռուոյ զաշտու: Գնդ. Պրէմօնի հրամանով հայ կամաւորական խումբերը թաղած են մեռելները և անոնց զէնքերը յանձնած ֆրանսական իշխանութեանց:

ՌՈՐՆՔ ԵՆ ԲԱՐԵՓՈՒՌԱՆՍ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Լրագիրները կը հրատարակեն թուրք գաշնագիրին այն յօդուածները որոնք Բ. Դրան զիրողութեանց վրայ փոփոխութեան ենթարկուեցան:

- 1.— Տարտանելի յանձնախումբը կազմելու ցօղուածը, ուր թուրք իրկայացուցիչ մը ևս պիտի ընդունուի:
2.— Թորքիոյ մէջ օրէնքը վերակազմող յանձնախումբին հաստատման յօդուածը: Այս յանձնախումբը կազմուած պիտի ըլլայ Անգլիացի, Ֆրանսացի, Իտալացի, Ճարն ներկայացուցիչներէ և ուր մասնագէտներ պիտի ունենան բոլոր գաշնակից և չեզոք և քարթիթիլասիոններու խնդրով շահագրգռուող պետութիւնները:
Այս յանձնաժողովին պարտականութիւնը պիտի ըլլայ գաշնագրի ստորագր.

բուժենէն մինչև վեց ամիս յետոյ օրինական դրութիւն մը կազմակերպել որ աւանձնաչորհուսման (capitulations) տեղը պիտի բռնէ:

3.— Թուրքիոյ տրուած պայմանաժամերը որպէսզի նուազեցնուին իւր բանակը, և ուրիշ կարգ մը երկրորդական կարեւորութիւն ունեցող պայմանաժամեր թեթեօրէն կրկարածուած են:

4.— Թուրքիոյ ձգուելիք գէնքերուն նուազեցման յօդուածն այ նոյնպէս փոփոխութեան ենթարկուած է:

5.— Ձէնք և ազմամթերքի յանձնման պայմանաժամը երկարացուած է:

6.— Թուրք վաճառական կան նաւերէն անոնք որ 1600 թօնէն նուազ տարողութիւն ունին, Թուրքիոյ կը մնան:

ԿԵԱՆՔԸ ՊՈՂՏԱՏԻ ՄԷՋ

Հօնտոնեան լուրերու համաձայն Անգլ. կառավարութիւնը նոր ոյժեր կը զրկէ Ջոր. Ալէնպիի զսպելու համար միջազգետքի մէջ յառաջ եկած Արաբական պայտամարտիւնը:

Կը յուսացուի որ մօտ ամենէն ամբողջ միջազգետքի մէջ կարգը պիտի վերահաստատուի:

ՌՈՒՄԱՆԻԱ ԿԸՆԴՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՏԱՆ

«Տէյի Թէլէգրաֆ» Հօնտոնէն կը գրէ թէ Ռումանիա պատրաստ է ընդունիլ Հայաստանի մանտան եթէ Ազգերու Գաղտնազրկութիւնը հաւանի:

ՀԱՄԱՅՆՆԵՐԻ ԵՒ ԱՍՏՐԻԱ

Ան ժէրմէնի գաղտնագրութիւնը վաւերացած օրինակները փոխարինելու աւարտութեան պահուն Մ. Քամպոն որ կը նախագահէր, իր ուրախութիւնը յայտնեց Աւստրիոյ հետ բարեկամական յարաբերութիւնները վերահաստատուած ըլլալուն առթիւ Աւստրիական պատուիրակութեան պետն այ նոյն իմաստով տրտայալտուեցաւ Այս առթիւ թէ սուսէի մէջ խնճոյց մը ստորգրուած էր:

ՄՈՒՍՏԱՖԱ ԲԷՄԱԼ ԿՍՊԱՌԱՆՑ

Պոսական հեռագիրներու համեմատ Մուստաֆա Բէմալ յայտարարած է թէ այն պարագային երբ Սուլթանը ստորագրէ գաղտնագրութիւնը, յառաջիկային Էնկերիի մէջ դուրմարուելիք ազգային ժողովին կողմանէ գահընկեց հաշակոճութիւնը իր տեղը իշխան Հիւսէյինը Թագաւոր և Պարլիթի պիտի հաշակուի:

ՄԱՐԱԶԱՆՑ ՓՕՇԻ ԿԱՐԾԻՔԸ

Մարաշիտ փոշ յայտարարած է «Մաթեն» թղթակցին, «Վէրապլի հաշտութեան գաղտնագրութիւնը համաձայնականութեան միութեան կախում ունի եթէ համաձայնականները անհամաձայնութիւններ ունենան, Գերմանիա մեր սահմաններէն շտապէն անգամ պիտի տանէ: «Սակայն չեմ կարծիր որ գաղտնագրութիւնը ազատ ձգեն Գերմանիան, որպէսզի զոնարարէ գաղտնագրութիւնը»:

ԱԼՊԱՆԱՑԻՆԵՐԸ ՅՈՅՆԵՐԸ ԿԸ ՏԱՆՁԵՆ

Եանեսէն կը տեղեկացնեն թէ իրենց գրաւած վայրերուն մէջ Ալպանացիները կը նեղեն յոյն բնակիչները:

ՆՈՐ ՊՍՏՈՒՐԱԿՆԵՐ

Մերակուտական Ալի Րիզա Թէլիֆիք, և զօրավար Հաճի Բաշա այսօր Բարիկ մեկնեցան միտալու համար Բէշիտ պէյի որպէսզի համաձայնական երազ կողմանէ որոշուած պայմանաժամի ընթացքին ստորագրեն գաղտնագրութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՂՈՐՈՎԻՆ ԱՋԱՏ

Համաձայնականները Թուրքիոյ տուած իրենց պատասխանին մէջ վերջնականապէս յայտարարած են թէ Հայաստան բոլորովին ազատ տէրութիւն մը կը ճանչցուի:

ՌՈՒՄԱՆԱՑԻ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԸ

Արէնք հասած Ռումանացի ուսանողներ մեկնած են դէպի Իտալիա և Ֆրանսա: Արէնքի մէջ արժանապայիլ պատերներ տրուած են իրենց:

ՅՈՒՆԱՑ ԹԱԳԱՌՈՐԸ ՌՕՏՈՍԹՈՒ ՄԷՋ

Աղեքսանդր Թագաւորը Ռոտտոթօ այցելած պահուն բնակիչներուն կողմէ անկարագրելի խանդավառութեան առաքելոյ եղած է: Թագաւորը մեկնուածի ատեն լացած է:

Մ. ՄԻԼՈՒՆ ԵՒ ԼՕՅՏ ԶՕՐՃ ԳՈՂ ԵՆ

Մ. Մ. Միլոն և Լօլա ձօրձ Սքաի Համաժողովին առթիւ իրենց զոհունակութիւնները յայտնած են:

Մ. ՄԻԼՈՒՆ ԿԸ ԽՕՍԻ

Մ. Միլոն երեսփոխական ժողովին յայտարարութիւններ ըրաւ ուր ըսաւ թէ գաղտնագրութիւնը փոխադարձ յանձնառութիւններ տուած են, այն միջոցներուն համար զորս անոնք ձեռք պիտի առնեն, եթէ Գերմանիա չի յարգէ Սքաի մէջ իր խոստումները զորձագրելու Մ. Միլոն մեծ յաջողութիւն ունեցաւ:

ԵԹԷ ՍՈՎԷՏՆԵՐԸ ԳԱՇՆԱԳԻՐԸ ՉՍՈՐԱԳՐԵՆ...

Մ. Միլոն խօսելով Ռուս-Բոլշեակնի զինադատարի մասին յայտարարեց որ Սովիէթները հազուադէպ անպատկառութեամբ մը պատասխանած են Մ. Լօլա ձօրձի զինադատարը կնքելու համար ըրած ստաջարկին: «Եթէ Սովիէթները մերժեն ստորագրել գաղտնագրութիւնը, այդ պարագային գաղտնագրութիւնը որոշած են ամեն միջոցներով Լեհաստանի օգնելու»:

Մ. ՎԻՍՈՆԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ուաշինկիթընէն հասած հեռագրի մը համաձայն նախագահին առողջական վիճակը վերստին ծանրացած է: Ան ոչ ոք չընդունիր:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՍՈՎԷՏՆԵՐԸ

Հօնտոնէ կը հեռագրեն թէ հնչեալով է Ռուս Սովիէթ կառավարութեան մասնաւոր ներկայացուցիչը իր հետ բերելով Սովիէթ ծանուցագիրը ի պատասխան վաճառականական յարաբերութեանց փոփոխման համար Անգլիոյ կողմէ եկած ստաջարկին:

Այս ծանուցագիրը անմիջապէս յանձնուած է Անգլ. կառավարութեան Ուրա Վոյս անմիջապէս նախարարական ժողովը պատրուած է որուն արդիւնքին մասին ոչ մէկ տեղեկութիւն առնուած է:

ԹՈՒՐԻԿԱ ՈՐՈՇԵՑ ՍՏՈՐԱԳՐԵԼ

Բէշիտ պէյի կողմանէ հեռագիր մը ստացուեցաւ ուր գաղտնագրութեան խնդիրն առթիւ Թուրք ծանուցագրին ի պատասխան համաձայնութեան տուած պատասխանին համապատասխանութիւնը եղած է: Այս հեռագրին վրայ նախարարական ժողով մը գումարուեցաւ ուր վարչապետը խորհուրդ տուաւ ժողովին որպէսզի գաղտնագրութիւնը ստորագրէ, երկար վիճարկութիւնէ մը ետք գաղտնագրութիւնը ստորագրուած է ման ի նպատակ որոշում մը արուեցաւ:

Ազգային Անցում Դարձ

Քաղաք. ժողովը երէկ անուշաբազ քաղաքիկ իրաւ կազմեց նախագահութեամբ Տեղապահ Ջոր:

Կիլիկիայէ համոզող անխորհրդան խնդրոյ մը մասին երկար խորհրդակցութիւն մը ունեցած է և հարկ եղած որոշումներ տուած:

Ժողովի անհաղպիր Պ. Միրզա Մահրան արտեղիցով հեռացած է ժողովէն, սակայն կը յուսանք թէ եղած թելեգրութիւնը շատով կը հարթուի և Պ. Մահրան եթէ երբէք մտադիր է իր պատճառարանեալ հրաժարականը ապա, իր այս մտողը թուրքիւնը ի գործ չգնելու համար, իր ընկերները հարկ եղածը կը դորձադրեն և կը զոցուի անհասկացողութեան մը յառաջ եկած այս միջոցէկը:

— Գեր. Տրգաս իսպ. Պալեան Մանիտակ քաղաքս եկած է քանի մը օր մնալու համար:

ԺԱՄԱՆՈՒՄ ՄԵԿՆՈՒՄ

Երէկ քաղաքս ժամանեցին Մանչըսթըրէ Պ. և Տ. Վահէ Սիվրիսարեան իրենց գաւկից հետ, իւր զէպի Պոլիս մեկնեցաւ Պ. Եագարէթ Կիւմուշկերտան:

Բ Ա Ց Ո Ւ Մ

«ԿԻԼԻԿԻԱՆ ԱԿՈՒՄԲԻ» ԿԻՐՍԿԻ 25 ՅԼԻՍ. 1920 ԺԱՄԱՆ 10ԻՆ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՃՈՒ ԲՈՒԻՆ ԲԱՆԱԽՕՍ. ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԳ, ԵՈՒՄԳ

Յառաջիկայ Կիրակի մեծ հանգիստաւորութեամբ տեղի կ'ունենայ «Կիլիկիան Ակումբ» բացումը, ի ներկայութեան Տեղապահ Ս. Հօր, կուսակցութեան և պաշտօնական հաստատութեան ներկայացուցիչներուն: Մուտքը ազատ է ժողովրդին: «Կիլիկիան Ակումբ» Վար - Բէ -

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա. Կ. Ո. — Տիկին Վ. Չիլիկերեանի մահուն առթիւ Պ. Լեոն վարպետեան 10 ռ. Պ. Մարտիկ Նուար 3 ռ. (Գ. Ն.):

ԾՆՈՂԱՅ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Միութեան Փրանսիերէի և անգլիերէի գիշերային դասախօսութիւնները շուրջ 9 ամիսէ ի վեր կանոնաւորապէս կը շարունակուին և յանձնարարով ծնողաց արձակուրդի առթիւ իրենց գաւկիցերը զարդնէն հետ չպահելու համար զրկել յիշեալ դասախօսութեանց, որոնք կ'ուսանողներն փորձ և մասնագէտ ուսուցիչներու կողմէ:

Մէկ ճիւղի համար ամսական մէկ, երկու քի համար մէկ ու կէս ոսկի: Արձանագրութեան համար զիմի կայ ընթացաւ ժամը 6-8

Վ.Ա.Ր. ՉԱՐԹՕՆԻ Կ. ՄԻՈՒԹԵԱՆ 10-3

ԻՐԱՐ ՄԻ ԱՆՑՆԻԿ

ԱՆՍՐԱՏ ԿԱՐԱԳ ԻՒՂ ԵՒ ԱՅՎԱԼԸԳԻ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ 2ԵԹ ՈՒՐԻՉ ՏԵՂԻՐ ՄԻ ՓԻՍՏԵՔ, ԱՅՈՒ ՈՒՂՈՒԿԻ ԳԻՄԵՔԵ

ՅԱՐԵԹԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Վաղեմի և հանրածանօթ ճաշարան Խորհանճըարի մէջ:

ՄԵԿՆՈՒՄԻ ԱՌԹԻԻ

Պ. Օննիկ Մէթերիսեան Ամերիկա մեկնելու առթիւ իր կահկարասին ծախել որոշած ըլլալով գնելու փափաքով կրնան զիմի Տէրտէր փողոց 25 թիւ իր տունը մտնեն առաւօտ ժամը 10էն 12:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԶՈԳԵՆԱԿԱՑԻՆ ԱՋԳ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Ց Թ Ղ Թ Ա Տ Ա Ր

Կ. ՊՈԼԻՍ - ԻՋՄԻՐ - ԲԻՐԷ - ՄԱՐՍԷՅԼ

Թղթարարական գեղեցիկ շրջանայ «ԱՆՏՐՈՍ»

Կը բանայ վերակառուցող ՊՈԼԻՍ - ԻՋՄԻՐ - ԲԻՐԷ - ՄԱՐՍԷՅԼ գիծին, ամեն օտանրհինգ օրն անգամ մը Իզմիրէ մեկնելով Պոլսոյ և Մարսէյի համար, կ'սպասուի Բիրէաէ շորքաթիթ առաւօտ 04:00-ու 4ին և նոյն իրիկունը կ'մեկնի ժամը 8ին զէպի

ՏԱՐՏԱՆԷԼ և Կ. ՊՈԼԻՍ Կերպառանալով Իզմիր ուրբաթ 15 օգոստոս և ժամը 2ին մեկնելով ԲԻՐԷԱԻ և ՄԱՐՍԷՅԼԻ համար

Թղթարարական պետ շրջանայ «ՆԱՔԱՍՕՍ» Կը մեկնի Իզմիրէ 18 Օգոստոս ժամը 8ին իրիկունը

ՏԱՐՏԱՆԷԼ և ՊՈԼՍՈՅ համար և 27 Օգոստոս ճիշտ ժամը 2ին ԲԻՐԷԱԻ և ՄԱՐՍԷՅԼԻ համար ընդունելով ապրանք և ճամբորդ ամեն կարգերու:

Մանրամասն տեղեկութեանց և տեղերը նախապէս վարձելու համար գործակալներուն ժՕՆ ԷԼԻՒՅԻ և ԸՆԿ. Բարալի 217 - Լօտու Միլհար փող կամ 2. ՇԱՀՈՒՄԻ

White Star Line

SCRETTICANOPIC

Տիեզերանշակ White Star Line-ի ընկերությունը նախընտրված է...

Վերադառնալիս շոգենախոտ մեծությամբ...

Վ. Պ. ԵՎԲԱԹԼԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

Մանրամասն տեղեկություններ և կանոնադրություններ...

ՀՐԱՊԱՐԱԿ

Table with 2 columns: Item name and price. Includes items like flour, oil, and various goods.

ՀԱՅ ԶԱՅՆ

Տէր և Տնօրէն. Մ. Կէպէնիտան Բաժնեկիցն տարեկան 800...

Կ. Ս. ՊԱՆԱՊԱՆԵԱՆ

ՍԵՏ ՎԱՃԱՊԱՍՏՈՒՆ

Տ. Նախկիններուն աչքը լոյս, Ա. Լիւրը ամանցաւ...

Լ. Ա. ՍԱԳՐԱՊԵՆ

ՍԵՏ ՎԱՃԱՊԱՍՏՈՒՆ ԿՈՐԱՉԵՆՈՒԹԵԱՆ

Ինչպէս միշտ այս անգամ էս, մեր արգոյ յաճախորդաց...

ՔԺՇԿՈՒՂԻ

Սանրամասնութեանց համար դիմելու Իգարի գիտարան...

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆԸ

Օր-թերթ Կապուղի և հասարակական Տարեկան բաժնեկիցն 700 դրոյ.

ՈՐԹՈՄՈՊԻԼ ՖԻԱԹ

ԵՒ՝ ՈՊԱԿ ԱՄԵՆԵ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Ֆիւթի գործարարները կ'ընեն պերճանքի օժտօպիներ...

ԱՄԲՂԶ ԳԻՇԵՐԸ ԲԱՑ

ՃՈԼԻ, ԱԼԷՎՐԱ, ԸՆԿ. ԼՄԹՏ.

ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ՋՐԱՐՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

ՍՈՒՂԱՊԱՍՏԱԿԱՆ ԼՈԳԱՆՔՆԵՐ

ՏԵՅԳԻՏ ԼՈՅՏ ՃՈՐՃ

Կենսագրական Ուսումնասիրություններ

Նշանակալից հազուելու կերպէն Մ. Լոյտ ձորձ աշխատեցաւ այս ազգային վերածնունդի գործին...